Պալինդրոմացում

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Տրված է մեկ տող: Կարելի է կատարել երկու տեսակի գործողություն.

1. որև տառ փոխել,
2. վերջից տառ ավելացնել:

Մինիմալ թվով գործողություններ կատարելով տողը դարձնել պալինդրոմ:
Պալինդրոմ են կոչվում այն տողերը, որոնք սկզբից և վերջից կարդացվում են նույն կերպ, օրինակ՝ `radar` :

Մուտքային տվյալներ

Տրված է միայն փոքրատառերից կազմված մեկ տող, որի երկարությունը մեծ է մեկից և չի գերազանցում `1000` -ը:

Ելքային տվյալներ

Արտածել մեկ թիվ՝ մինիմալ գործողությունների քանակը:

Օրինակ

Մուտք	**Ելք**
`robot`	`1`
`tests`	`2`

Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 1 **(12 միավոր)** Թեստերն ընտրված են այնպես, որ բավական է միայն առաջին գործողությունը:
- Ենթախնդիր 2 **(42 միավոր)** Տողի երկարությունը չի գերազանցում `100` -ը:
- Ենթախնդիր 3 **(46 միավոր)** Տողի երկարությունը չի գերազանցում `1000` -ը: